

**Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ****ՀԱՅ-ԾՈՒՄԵՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԱՂԵՐՍՆԵՐԻ  
ԾՈՒՐՉ**

Հայկական ժայռապատկերներում հանդիպում են նաև եղջերավոր կենդանիների և օձերի հակամարտությունն արտացոլող պատկերներ: Եղջերավորների և օձերի հրական հակամարտությունն իր արտացոլումն է գտնել այնպիսի բառերում, ինչպիսիք են օձակոյի՝ «օձերը կոխվուսող» (ոչսար, հորը), «օձահալած»՝ «օձեր հալածող» («օձահալած եղջերու»), «օձամարտ»՝ «օձի հետ կովող» («եղջերուն օձամարտ է»).<sup>1</sup> Խնմտ. ոլորաեղջյուր այժի պարսկերեն մարշօր, մարշար անունը (բառացի՝ «օձակեր»): Այս տեսանկյունից պակաս խոսում չեն Մովսես Խորենացու հիշատակած «Պատիժառակար լեռնանուն-երկրանունը և անվանակիր լեռնաշղթան ընդգրկած երկրի սեպագրային KUR Andia («Երկիր Անդիա») անունը.<sup>2</sup> Հայկական լեռնաշխարհին հարավ-արևելքից հարող մերձկասայշան այդ լեռնաշղթայի և դա ընդգրկած երկրի վերաբերյալ մեր «Պատիժառակար գաւառ, որ է Գեղմանց լեռներ, եւ ծովեզերեայք, եւ այսր ես քան զնոսա»:<sup>3</sup> Ապստամբած այս նույն տարածքի բնակչության երնիկական կազմը պարզվում է Ստրաբոնի հետևյալ վկայության միջոցով: Նա գրում է. «Լեռների երկարությամբ, ծովից սկսած մինչև բարձունքները բնակվում են քիչ քանակությամբ աղվաններ և հայեր, և ավելի շատ գեղեր, կադուսիներ, ամարդներ, կուրսիներ, անարիակներ և ուրիշ զանազան ցեղեր»:<sup>4</sup> Մի կողմից աղվանների (ալբանացիներ), մյուս կողմից գեղերի (զիրանցիներ) և կադուսիների (կատիշներ) միջև բնակված հայության այս փոքր հատվածը, բնականարար, ներկայացրել է Մեծ Հայքի արևելյան նահանգի՝ Կասպից ծովին հարող Փայտակարանի, (և նրան մերձ) հայերին: Նրանք էլ լեռնաշղթային տված են եղել հայերեն «Պատիժառակար անունը»:<sup>5</sup>

Պատիժառակար լեռնանուն-երկրանունը բաղկացած է \*պատ-իժ-ա-հար բաղադրիչներից: Սրանցից առաջինը նույնական է պատ «որմն, պատնէշ»<sup>6</sup> հավաստի ստու-

<sup>1</sup> «Նոր բառզիրք հայկագեւան լեզուի» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. II, Եր., 1981, էջ 1026, Ստ. Սալիսայանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀՀԲԲ), հ. IV, Եր., 1945, էջ 606:

<sup>2</sup> Ստրաբոնի Աղբամերարի 3-րդ բազմություն (մ.թ.ա. 811-782թթ.) իր արշավանքներից մեկի ժամանակ հասել էր «մինչև Անդիա և Արևելքի մեծ ծով, այսինքն՝ Կասպից ծով» (Ն. Ալոնց, Հայաստանի պատմություն. Ակոնքները 10-6-րդ դր. մ.թ.ա., Եր., 1972, էջ 94):

<sup>3</sup> Մովսեսի Խորենացու պատմություն Հայոց, Եր., 1981, Բ, ծգ:

<sup>4</sup> Strabo, XI, 7, 1 (Ստրաբոն, Քաղեն և քարքմաննեց Հ. Աճառյան, Եր., 1940, էջ 34-35):

<sup>5</sup> Հին պարսկերն արձանագրությունների մեջ patisunaris լեռնանուն գտնելը և դա մեր «Պատիժառակարի հետ նոյնացնելը» (Մովսեսի Խորենացու պատմություն Հայոց, էջ 496, ծան. 180) բյորիմացության արդյունք է: Իրականում խոսքը հին պարսկական թագավորական կոչված ցեղի մասին է (տե՛ս Wilhelm Brandenstein und Manfred Mayrhofer, Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964, S. 139):

<sup>6</sup> ՆՀԲ, հ. 2, էջ 602: Այս լեռնաշղթայի հյուսիսային հատվածը բռնած երկիրը՝ Մեծ Հայքի Փայտակարան նահանգի լեռնային մասը, նաև Թալիշ է կոչվել: Կեղծ Կալխաթենեսի «Կարք Ալերսանդրի» երկում Կասպիական դրունը (այժմյան Սալավարի լեռնանցքը) տեղորոշված է «մերձ յաշխարհն Թալիշ ի գաւառն Գիլանայ» (Մ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 58): Թալիշ անվան թալ- հիմքը առնչվում է «պատ» հասկացությանը.

զարանություն չունեցող բառի հետ,<sup>7</sup> երկրորդը՝ հնդեվրոպական ծագումով իժ «մի տեսակ վտանգավոր օձ» բառն է,<sup>8</sup> երրորդը՝ -ա- հոդակապը, իսկ չորրորդը՝ դարձյալ հնդեվրոպական ծագում ունեցող հարք «խփել, հարվածել» արմատը:<sup>9</sup> Լեռնանվաճ պատ- բաղադրիչը կիրառված է «լեռնաշղթա» իմաստով, որովհետև հին հայերի պատերացմամբ իրենց երկիրը իրենց տունն էր՝ «Հայոց տուն»-ը, նրա եզերական լեռնաշղթաները հատող լեռնացքները՝ նրա «գրներն» էին, իսկ իրենք՝ այդ լեռնաշղթաները, իրենց տան «պատերը»:<sup>10</sup> Հասկանալի է, որ «լեռնաշղթա»/«պատ» նույնացման տեսանկյունից Պատիժահար (<\*պատ-իժահար>) լեռնանունը նշանակել է «փժահարի լեռնաշղթա», այսինքն «իժ խփողի՝ իժին հարվածողի լեռնաշղթա» (հմնտ. նոյն հարք բաղադրիչի «խփող, հարվածող» նշանակությունը բմրկահար, փայտահար, քնարահար բարդ բառերում): Երբ ի նկատի ենք առնում «զեռ», «լեռնաշղթա»/ «եղերավոր էակ» առասպելարանական զուգորդում՝ արտացոլված Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ լեռնանուններում (հմնտ. առն և Առնու, արտի, արտիկ և Արտին, Արտու, ցուլ և Ցուլ, Ցուլ զլուս, սիրամ և Սրմանց), ապա պարզ կդառնա, որ իժահար ըմբռնվել է Պատիժահար լեռնաշղթայի առասպելարանական դրսևրում եղերավոր էակը:

Սուաջին իսկ հայացքից նկատելի է հայերեն անդի/անդեայ «պաճար, արջառ, նախիք» բառի<sup>11</sup> և Պատիժահար լեռնաշղթան բռնած Andia սեպագրային երկրանկան<sup>12</sup> արտաքին հնցյունական կապը: Հայերեն բառը Հ.Աճայոյանը բիեցնում է անդ «այսմ, շեմ» արմատականից՝ հընթացս մերժելով Նոր հայկացյան բառարանում տեղ գտած դիտողությունը նրա՝ հայերեն նոյնահունչ, բայց «արտ» նշանակող, բառից ծագած լինելու վերաբերյալ:<sup>13</sup> Գ.Զահոնյանը մեր անդի/անդեայ «տավար» բառը արմատակիցն է համարում հայ. անդ/հանդ<sup>14</sup> և ընծուղ «մեծ հորք», ինչպես նաև ազգակից լեզուներից իյուր. and- «խոտ», կիմք. enderic «հորք», enderig «ցուլ, եղ», anner «երինջ», բրես. oumner «երինջ» բառերի:<sup>15</sup> Հ.-ե. \*andh->անդ արմատին մի դեպքում հավելվել է -ի, մյուսում՝ -եայ վերջածանցները: \*And-ia բաղադրիչներից կազմված լեռնանուն-երկրանկան մեջ առկա են նոյն \*and- (<հ.-ե. \*andh-) արմատը և հիշյալ վերջածանցներից, հավանաբար, առաջինը: Հայ. -ի վերջածանցը ծագում է հ.-ե. -(i)յան նախաճկից<sup>16</sup> և տեղանվանական կիրառություն է ունեցել դեռևս սեպագրային ժամանակներում. հմնտ. Albaia, Alia, Alqania, Arniia, Maldiia և այլն: Ավելի ուշ գրաված տեղանուններից են Անի, Կարի, Կումայրի, Հայի, Փարսի և այլն: Andia երկրանկան հիմքում ընկած «տավար» նշանակող բառը ենթադրել է տախիս, որ խոշոր եղերավոր կենդանին տեղական հայ բնակչության կողմից ըմբռնվել է ոչ միայն Պատիժահար լեռնաշղթայի կենդանի դրսևրումը, այլև պաշտամունքի արժանի իժահար-օճասպան տոտեմ-աստվածության:

հմնտ. բաղ «պատի կամարաձն շարված մասը» և բաղայ (<բաղ-այ>) «պատուհան» (ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 78):

<sup>7</sup> Աճայոյան Հ., Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 4, Եր., 1979, էջ 32-33:

<sup>8</sup> Աճայոյան Հ., հ. 2, Եր., 1973, էջ 238-239:

<sup>9</sup> Նոյն տեղում, հ. 3, Եր., 1977, էջ 52-54:

<sup>10</sup> Պետրոսյան Ս., Ուրմեն և Արլիս երկրների տողորշման շուրջ, «ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր» (նվիրված «Սլավյան և անկախ Հայաստանի անկախության մասին» հոչակագրի 90 և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 40-ամյակին), Վանաձոր, 2009, էջ 87-88:

<sup>11</sup> ՀԱԲ, հ. 1, Եր., 1971, էջ 188:

<sup>12</sup> Արյունյան Հ.Բ., Տոponimika Յրարտу, Եր., 1985, ստր. 28.

<sup>13</sup> ՀԱԲ, հ. 1, էջ 186:

<sup>14</sup> Զահոնյան Գ., Հայերենը և հնդեվրոպական իշխ լեզուները, Եր., 1970, էջ 17:

<sup>15</sup> Նոյն հայ բառի պատմություն. նախագրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԾ), Եր., 1987, էջ 157:

<sup>16</sup> ՀԼՊՆԾ, էջ 231, 355:

Գեղամա լեռների մի ժայռապատկերում այժմ ու օճռ միասին են պատկերված (նկ.1):<sup>17</sup> Քայլ դա սովորական օձ չէ, այլ օճավիշապ, որը ձգվել է մինչև երկինք՝ երկնային լուսատուն կլաներու մտադրությամբ: Հայկական առասպելների համաձայն՝ «Մի մեծ վիշապ պատել է աշխարհը՝ երկնքի և գետնի միջև: Այնքան մեծ է այդ վիշապը, որ հեռվից տեսնում է իր պօքը և կարծում է, թե դա ուրիշ զազան է».<sup>18</sup> Իսկ բերված Գեղամա լեռների ժայռապատկերը պատկանում է մ.թ.ա. III հազարամյակի ժայռապատկերների խմբին:<sup>19</sup> «Էնումա էլիշ» («Երր վերևում») շումերական հենքով աքաղական տիեզերաստեղծման պոեմի համաձայն, Արգուն (աքաղ. Ապու) ամուսինն էր Թիամարի (սրա անունը աքաղերեն նշանակում է «ծով»): Սրանք, իրար խառնելով իրենց ջրերը, ծնել էին իին աստվածներին: Էնկին (աքաղ. Էյա, Հայա)՝ աստվածների նոր սերմոնի առաջնորդը, հոսուն-հստակ ջրերի անձնավորումը, սպանել էր Արգուն, տեղում ստեղծել իր կացարանը և այստեղ էլ կյանք տվել Մարդուկին:<sup>20</sup> Այդուհետև Էնկին կրչվում էր «Արգուի տեր», քայլ Էրերու քաղաքի նրա գլխավոր տաճարը պահում էր իր իին անունը՝ «Արգուի տուն»:<sup>21</sup>

Էնկի-Հայան պատկերվում էր ոչ միայն ձկնամարմին (կամ ձկան պոչով) էակի տեսքով<sup>22</sup> և Տիգրիս ու Եփրատ գետերի խորհրդանիշների հետ միասին (ուստիից կամ ձեռքի սափորից բխող ջրի վայրընթաց շիքերով), այլև այժագլուխ առասպելական էակի տեսքով, իսկ նրա կայտն խորհրդանիշը այժմ էր:<sup>23</sup> Ամենայն հավանականությամբ, այժային էությամբ օժտված Էնկիին է խորհրդանշում Ուր քաղաքի արքայական գերեզմանոցի պետութերով հայտնաբերված «Այծը թիի մոտ» արձանիկը՝ պատրաստված *ուկուց, լաջվարդից և սաղակից*:<sup>24</sup> Ընդ որում, լաջվարդե նորութը համարվում էր աստվածային նշան և նրանով օժտված էին անգամ սրբազն ցուլերի արձանիկները:<sup>25</sup> Ըստ Երևույթին, լաջվարդե նորութը ջրամամուտից նորութի հետագա վերափոխման հետևանք է և վերիուշը՝ դա կրած էակների ջրային-գետային ծագման: Այս առքիվ հիշենք հայկական հեքիաթների «Ջրերի քագավորին»: «Հեքիաթներից մեկում նա հետևյալ կերպ է ներկայանում. «Ջրերու քագավոր գելնա յաղրբակից..., խորոտ հալվոր մե, զլսում՝ օսկե քազ, ուր շորեր՝ փրփուր, ուր աջքեր՝ կանանչ կրղա, ուր նորութ՝ կամանչ մամուռ, սաղաք գավազանն ի ձեռ»:<sup>26</sup>

Ջրային-գետային բնույթի Էնկի աստծու այժային խորհրդանիշներ ունենալու իրողությունը իր բացատրությունը կգտնի, եթե Տիգրիսի կամ Եփրատի հոսանքն ի վեր

<sup>17</sup> *Սարտիրոսյան Հ.*, Գիտությունն սկսվում է նախմարում, Եր., 1978, էջ 29, նկ.23:

<sup>18</sup> *Ղանձալայան Ա.*, Ավանդապատում, Եր., 1969, էջ 407:

<sup>19</sup> *Սարտիրոսյան Հ.*, նշվ. աշխ., էջ 28:

<sup>20</sup> Veronica Ions, *The world's mythology in colour*, Book Club Associates, London, 1974, p.12; D.Homès-Fredericq, *La religion en Mésopotamie de Sumer à Babylone*, “De Sumer à Babylone. Collections du Louvre”, Bruxelles, 1983, p. 45.

<sup>21</sup> D.Homès-Fredericq, նշվ. աշխ., էջ 45: B.K. Афанасьева, Абзу, “Мифологический словарь” (այսուհետև՝ MC), M., 1991, спр. 8; Նոյեմի, Әнкү, “Мифы народов мира” (այսուհետև՝ МНМ), մ. II, M., 1988, спр. 662:

<sup>22</sup> Փղտացիների գերազույն աստվածը, որն հայտնի էր Dagon անունով, պատկերվում էր մարդու մարմնի վերնամասով՝ մարդ, իսկ սորորին կետով՝ ձուկ (“Иллюстрированная полная популярная Библейская энциклопедия архимандрита Никифора”, M., 1891, спр. 182-183):


<sup>23</sup> Асծիև В.И., *История древнего Востока*, Л., 1953, спр. 104; D.Homès-Fredericq, նշվ. աշխ., р. 45, fig. 55; Khosro Khazai, *Les grandes étapes de l'archéologie mesopotamienne*, “De Sumer à Babylone. Collections du Louvre”, p. 30, fig. 33; Афанасьева В.К., Гильгамеш и Энкүду, M. 1979, спр. 124-125, табл. XX, рис. A; МНМ, մ. II, спр 648 рис., спр. 651 рис., спр 662 рис.; “История древнего Востока”, под ред. В.И. Кузинина, M., 1979, спр. 178.

<sup>24</sup> “Le Berceau de l'humanité. Les grandes étapes de l'humanité”, Genève, 1976, p. 102, fig. 147.

<sup>25</sup> Mallowan M.E., *L'aurore de la Mésopotamie et de l'Iran*, Éditions sequoia, Paris-Bruxelles, 1966, р. 94, fig. 102.

<sup>26</sup> «Հայ ժողովրդական հեքիաթներ», h. X, Еր. 1976, էջ 19:

հասնենք այս աստծու նախատիպ աստվածության բնօրբան՝ հնդկրոպական ցեղերի նախահայրենիք Հայկական լեռնաշխարի: Ենիկն այծային զծեր ուներ նախ և առաջ կենաստու-պտղաբերող հոսուն ջրերն անձնավորենու պատճառով: Հին հնդկրոպացի-ների ընկալմամբ՝ տղամարդի և արու եղջերավոր կենդանիները «հոսեցնողներ» էին: Հայերեն առն «վայրի խոյ» բառը ծագում է հ.-ե. \**rsen-* կամ \**uersen* նախաձևից, որից են նաև հետևյալ բառերը. հուն.՝ ὄρσην, ὄρρην «արու, այր, առնական», ավեստ. և հին պարս. արշան «այր», հուն.՝ ἀρνειός «խոյ», հին հնդկ. րշահոն-, որ' շա «ցուլ»: Դրանց հիմքում տեսնում են կամ հ.-ե. \**eres-* հոսել, բացություն, կամ \**uers-/\*urs-* լցնել, հեղել» արմատը (հմնտ. հին հնդկ. որշատ «հոսել», վարշատ «անձրև տեղալ», վարժա- «անձրև», հուն.՝ ἔρση, լատին. րոշ «ցող, խոնավություն» և այլն):<sup>27</sup> Այս արմատով կազմված դիցանուններից են փոյտկական հնձի և հացահատիկային բույսերի հովանավոր, որկրանոլ Լիտյուերսի անունը. Լիտյուերսաց (<\*Lit-*uers-*)<sup>28</sup> և, մեր կարծիքով, Արարատյան դաշտի ուրարտական դարաշրջանի աստվածություններից Իվարշայի (I-O-nr-šn-a)<sup>29</sup> անունը:<sup>30</sup> Հ.-ե. \**uers-*ի սոսրին \**urs-* ձայնդարձից կոնենանք \**uars-* ձևը, որից՝ ի նախյիր-նախածանցով՝ \**iuars-*: Հ.-ե. \**urs-* > հայ. \*վարշ հմնտ. քարշամ, քորշում < հ.-ե. \**trs-* «զորանալ, ցամաքել»:<sup>31</sup> Նոյն վարշ արմատն է առկա հին հայկական Վարշակ (<\*վարշ-ակ) տեղանվան մեջ, որը Տատեռն ավանի (այժմյան Դիաղինի) մոտ գտնվող ջերմուկների վայրի անունն էր:<sup>32</sup> «Ած»/«հոսեցնող»/«զետ» առասպելաբանական գուգաղրումներից տեսանկյունից ուշագրավ են «այծային» սոսուզաբանությամբ հայկական գետանունները: Հիշենք, Դլլար/Դլլար <*Diglat*<*Dignat*. հմնտ. հ.-ե. \**dig-* «այծ», Քաղիրը (հմնտ. քաղ «արու այծ»), *Sēkpr/Sēkpr* (հմնտ. տիկ <հ.-ե. \**dig-* «այծ»), Ծորոխ (հմնտ. ծորնդուն «եղջյուր» և ծուռ «նրամազ այծի տեսակ»):<sup>33</sup> Առավել ուշագրավ են Հայկական պար լեռնաշղթայի արևատյան հատվածի Զրարաշին («ջուր բաշխող») անունը և նրա գագարներից մեկի Ջոշասար<sup>34</sup> (<*poz* «արու այծ + ա + սար) անունը, մանավանդ, երբ դրանք դիտարկում ենք փոխադարձ կապի մեջ:



նկ. 1

Ենիկ-Հայա աստծու այծակերավ ընկալման պատճառներից մեկն էլ կարող է լինել այն, որ եղջերավոր կենդանիներից հենց վայրի այծերն էին տերը լեռնային բարձունքների, որտեղից էին սկիզբ առնում Հայկական լեռնաշխարհի գետերը, դրանց

<sup>27</sup> ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 261: *Гамкrelidze T.B., Иванов В.В.*, Индоевропейский язык и индоевропейцы (այսուհետև՝ ԻЯИ), տ. I-II, Տօ., 1984, տ. II, ստր. 566, 680.

<sup>28</sup> *Нерознак В.П.*, Палеобակанские языки, М., 1978, сстр. 150.

<sup>29</sup> Այս աստվածության տեղական ծագման վերաբերյալ տե՛ս *Արյունյան Հ.Վ.*, Новые урартские надписи, Еր., 1966, сстр. 17, 94.

<sup>30</sup> *Պետրոսյան Ս.*, «Հարայի ցեղամիություն» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, «Լրաբեր հասարակական զիտությունների», 1979, թիվ 12, էջ 73:

<sup>31</sup> ՀԱԲ, հ. II, էջ 155:

<sup>32</sup> *Երեմյան Ս.*, Աշվ. աշխ., էջ 85:

<sup>33</sup> *Պետրոսյան Ս.*, Դրախտի գետերի և Խավիլա, Քուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2006, թիվ 2, էջ 243-246:

<sup>34</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Եր., 1971, էջ 19:

թվում նաև Տիգրիսն ու Եփրատը: Ի նկատի առնենք նաև, որ հայկական հնագույն ցեղերից շատերի տունեմ կենդանին եղել է քարայծը (վկա՝ Հայաստանի «Փծազրեր»-ժայռապատկերները), իսկ քարայծերի հոտի առաջնորդ քոչը տոտեմական նախատիպն է եղել մեր աստվածային նախնի Հայկ:<sup>35</sup> Ենկի-Հայա աստծու և նրա շրջապատը կազմած առասպելաբանական կերպարների սերտ կապը ինչպես ջրային տարերքի (Տիգրիսի և Եփրատի), այնպես էլ լեռնային բարձունքների եղջերավոր բնակիչների (քարայծերի) հետ իր արտահայտությունն է գտել նաև նրանում, որ Ենկին համարվում էր շումերների գերազույն աստված Ենլիի որդին: Վերջինիս հայտնի խորհրդանշը եղջերավոր խոյրն էր,<sup>36</sup> կացարանը՝ երկինքն ու երկիրը իրար միացնող բարձր լեռը, ինքը՝ Ենլիլը կոչվում էր «Սեծ լեռ» (KUR. GAL), իսկ իր գլխավոր տաճարը Նիպպում՝ «լեռան տուն» (E.KUR):<sup>37</sup>

Ենկիի և Արզուի առասպելաբանական առճակատման մեջ իրենց արտացոլումներն են գտել ինչպես այծի և օծի իրական հակամարտությունը, այնպես էլ ջրային տարերքի երկու՝ իրար անհարիր տեսակներ հանդիսացող հոսուն-քաղցրահամ և մեռյալ-աղի (հողագործի տեսանկյունից) ջրերի հակադրումը: Իրական-առասպելաբանական այս հենքի վրա էլ Արզու (Abzu) դիցանվանը «ջրային-օձային» բնույթ կարելի է վերագրել: Մեր կարծիքով, այս դիցանունը բաղկացած է ab-zu բաղադրիչներից, որոնցից առաջինը «ջուր» և «ջետ» է նշանակում, իսկ երկրորդը պարունակել է «Ստորին աշխարհի» (ընդերքի) էակին բնորոշող մի իմաստ: Abzu-<sup>\*ab</sup>-zu դիցանվան -zu բաղադրիչը կարելի է բխեցնել հ.-ե. \*g' հս- արմատից, իսկ աբ- բաղադրիչի հիմքում տեսնել հ.-ե. \*ab/\*Hab(h)- արմատը: Հնան. վերջինս իրենց հիմքում ունեցող բրաևյան՝ ’Աբա ջրահարսի անունը և փոքրասիական՝ ’Աթօս, լիտվական Abista, լատիշական Aava, բրիտական Abos և այլ գետանունները:<sup>38</sup> Սարդկության պատմության ամենավաղ ժամանակներից սկսած՝ «օձը բարով էր ենթարկված և ամեն մի լեզու մի կերպով աշխատել է խոսափել բուն անունից կա՞ն այլափոխելով, կա՞ն մի նոր անուն հնարելով»:<sup>39</sup> Այս տեսանկյունից ուշագրավ է օծի բուն անվանը փոխարինած հ.-ե. \*g' հս- արմատը, որն հատկացված է եղել նաև ձկանը. ձուկն < \*g' հս-, որին հավելվել է -կն մասնիկը (հնմտ. արմուկն, կրուկն, մուկն, ունկն):<sup>40</sup> Սրա արմատակիցներից են նույնպես «ձուկ» նշանակող հուն. ῥ'χθնչ, պրուս. suckis, լիտվ. žunvis բառերը:<sup>41</sup> Abzu դիցանվան -zu բաղադրիչի ձ-ով արտասանության օգտին կարող է վկայել սեպազը. Alzi, Alzini ձևերի դիմաց Աղձնիք (<\*աղձինի-ք>) ձևի գոյուրյունը: Հ.-ե. \* g' հս- արմատի ոչ միայն ձկանը, այլև օծին հատկացված լինելու տեսանկյունից ի նկատի առնենք, որ ձուկը և օձը համարվում էին «Ստորին աշխարհի» բնակիչներ՝ ընդերքային էակներ: <sup>42</sup> «Ձուկ» և «օձ» հասկացությունների մերձավորության մասին է խոսում հայ. օձաձուկ բառը, որը գրաբարում ոչ միայն ձկան տեսակ էր նշանակում, այլև օծի տեսակ:<sup>43</sup> Նույն բանն են ցույց

<sup>35</sup> Պետրոսյան Ս., Հնագույն Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հասնելու», Եր., 2003, թիվ 2, էջ 125-131: Նոյնին, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 15, 18-19:

<sup>36</sup> Khosro Khazai, աշվ. աշխ., էջ 42, նկ. 52, թ. MHM, տ. II, ստր. 651 րու.

<sup>37</sup> Աւետիք Բ. Ի., աշվ. աշխ., էջ 105:

<sup>38</sup> Գոնօն Լ.Ա., Հետորյութեա արեալներու առանձինականությունների շուրջ, Հայաստանի գլխավոր աստվածությունների շուրջ, «Հայաստանի էկոլոգիական հասնելու», Եր., 2003, թիվ 2, էջ 125-131: Նոյնին, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 15, 18-19:

<sup>39</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 611-612:

<sup>40</sup> ՀԱԲ, հ. III, էջ 160:

<sup>41</sup> Նոյնին:


<sup>42</sup> ԻՐԱ, մ. II, ստր. 535-536.

<sup>43</sup> Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան. Նոր հայկական բառարանում չվկայված բառեր, Եր., 2010, էջ 292:

տալիս նաև *լոկ «լորտու օձ»<sup>44</sup>* և *լոք, լոքո բառերը* (վերջինս խոշոր, մեծագույն և լայնա-թերան ձուկ է).<sup>45</sup>

Ուշագրավ է, որ Արգուի մյուս անունը՝ *Engurra-ն*,<sup>46</sup> և նույնապիսի լեզվամտածողության արդյունք է: Նրա հիմքում մենք տեսնում ենք \*engur- նախաձեր՝ բաղկացած հնդեվրոպական ծագումով \*eng- արմատից և -սր վերջածանցից: Հ.Աճառյանը նկատել էր տալիս, որ հնդեվրոպական ծագում ունեն ինչպես մեր *իօ* և *օձ* բառերը, այնպես էլ ազգակից լեզուներում «օձաձուկ» նշանակող մի խումբ բառեր.<sup>47</sup> Դրանցից են. *anguilla, միջ, իոլ, esc-ung* (բառացի՝ «ջրօձ») լիտվ. *ungurys, պրոս, angurgis, ուուս, յորօ:*<sup>48</sup> Հնդեվրոպական նախաձերն առավել հարազատ մնացած հայերն բառը *ընգոյա-ն* է, բայց որը նշանակում է «ծովային առասպելական մի հրեշ» և համարվում հավաստի ստուգաբանություն չունեցող բառ:<sup>49</sup> Անտարակույս, *ընգոյա <\*ինգ-իդայ,* որտեղ \*ինգ- <հ. ե. \*eng<sup>u</sup> (սրանում առկա -իդ և -այ վերջածանցների համար հմտ. *բռոնդ, գոռն, մաքի, որջի, արքայ, հօրայ, մօրայ և այլն*), իսկ *Engurra-\**engur-*\*engu-* որ (հմմտ. *բլուր, բարքաքուր, փշուր և այլն*):

Արգուի ինչպես ջրային, այնպես էլ ընդերքային էակ ընդոնվելու և օծին ու ձկանը բնորոշ գծեր ունենալու մասին է խոսում հայկական առասպելաբանությունից հայտնի վիշապաձկան՝ նույն Ընգոյայի նույնապիսի ընկալումը: Սրան իր միջավայրում է պատկերում Նոր քարի դարաշրջանի սկզբով թվագրվող Գեղանա լեռան ժայռապատկերներից մեկը (նկ. 2):<sup>50</sup>



նկ.2

Ժայռապատկերի կենտրոնի փոքր շրջանակը արևի պատկերն է, եզրային մեծ շրջանակը՝ տիեզերական օվկիանոսն է, իսկ այդ երկուսի միջև պատկերված է գալարված վիշապաձուկը (օձաձուկ): Կենտրոնական պատկերից ծախ պատկերված է աջ ձեռքին գենք ունեցող մի արական աստվածություն (մերկամարմին է) իսկ կենտրոնական պատկերից աջ՝ ինչ-որ գազան, որը ևս աստվածության նման պատրաստ է հարձակվելու վիշապաձկան վրա: Տիեզերական վիշապաձկան վերաբերյալ պատմված առասպելներից առավել ամբողջական տեսք ունի Զավախսում զրի առնված հետևյալ տարրերակը: «Աս ծուկը անքան երկան է, օր ինքն իրեն պոչը չի ճանչէ, զիտե թե ուրիշինն է, միշտ կենեն թե բռն... Եփոր ատիկ պոչը բռնե, աշխարհս վար պիտի անցնի: Աս ծուկը դաֆատ դոճա (ահազին) սարին բոլորտիքը պրտուի կը: Վեց ամիսը ժումը (մի անգամ) մեն պտուտը կէնե: Եփոր պտըտի պլծնի կը՝ անորթնա կը, բանա կը բերանն ու ազըմ (բավկականին) ջուր կուլ կուտա, եսև դունչը դնե կը սարին, ջուրը քափիւ կը (նետել) սարի գլխիքը: Թափիւ կը սարի գլխիքը քը չը՝ սարի գլխեն սելափ'մ (հեղեղ) պրծնի, ծառ, քար, գալ, առշ, ապան (առյուծ), ինչ օր ուսատ գուգա՝ քշն բերե առ ձկան բերանը

<sup>44</sup> ՀԱԲ, հ. II, էջ 206:<sup>45</sup> Նույն տեղում, էջ 225, ՀԱԲ, հ. II, էջ 305:<sup>46</sup> Աֆանասյեա Բ.Կ., Ածոյ, սոր. 8.<sup>47</sup> ՀԱԲ, հ. IV, էջ 611-612:<sup>48</sup> ԻԱԻ, տ. II, սոր. 526.<sup>49</sup> ՀԱԲ, հ. II, էջ 122.<sup>50</sup> Սարդարյան Ս., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 117, աղ. XXIII:

լրեւ կը (լցնում է): Զուկը ուտելունը կուտե, մնացածը առկմները խփեն ու ֆնչալեն դրս փշեւ կը (փշե): Սամի քամին (սամում) ինչ է, օր Մեռած ծովի ոլլաղեն (կորմից) փշեւ կը, ըշտը (հենց) ատ ձկան շունչն է»:<sup>51</sup>

Այս և առասպելի այլ տարրերակներում նախաստեղծ էակը կամ ուղղակի ձուկ է կոչվում, կամ վիշապ:<sup>52</sup> Նրա շարժումներով են բացատրվել այնպիսի տարրերային բացասական երևույթներ, ինչպիսիք են երկրաշարժը, լեռներից իջնող հեղեղները, կայծակ-փայլակը, չար հողմը (հմնտ. ձկնամբ<ձուկն-ամբ>՝ «քարառ, պատուտահողմ, փոքրորիկ»՝ կոչված նաև վիշապ, սաստաճի քամի):<sup>53</sup> Աշխարհը պատող օվկիանոսում բնակված և մարմնացյալ Արգուի հետ ընդհանուր նախատիպ ունեցած այս վիշապաձուկը, ըստ երևույթին, վիշապամարտ աստծուց պարտություն կրելով, ի տարրերություն Արգուի, չեր սպանվել, այլ մղվել էր մարդկության բնակության տարածքից հեռու՝ տիեզերքի եզրամաս, որպիսին կարող էին մեր հեռավոր նախնիները համարել Հայկական լեռնաշխարհին համեմատաքար մոտ 4 ծովերի՝ Սև, Կասպից, Սիծերկրական ծովեր և Պարսից ծոց ամբողջությունը (հմնտ. բնակելի տիեզերքը բոլորող չորս «հաղորդակից» ծովերի մասին առասպելաբանական պատկերացումը):

Ենկի աստծու «Չրային» բնույթին առնչվող միակ կերպարը չէ Արգուն, որ շումերական առասպելաբանության մեջ հնդեվրոպական-հայկական հետք է մատնանշում: Այդպիսիք են նաև որիշ նի շարք կերպարներ: Դրանց մեջ առաջինը է մնկի որդի Ասալդրուխի/Ասալլուխին է՝ հետազայում նույնացված բարելոնյան Սարդուկ աստծուն:<sup>54</sup> Նա դիվահալած, պահապան և բուժիչ աստված էր:<sup>55</sup> Նրա անվան հնդեվրոպական-հայկական սոուզարանությունը իր պաշտամունքային կենտրոն Կուտա քաղաքի<sup>56</sup> անվան հայկական զուգահեռների հետ միասին<sup>57</sup> խոսում է Ասալդրուխի նախատիպի հայկական արմատների մասին: Asalduhi<\*as-ald-s-hi դիցանվան առաջին բաղադրիչը, մեր կարծիքով, ծագում է հ. ե. \*ans-(\*Hn̄s-) «տեր, տիրակալ» արմատից: Այս արմատն ընկած է ժառանգ լեզուների մի շարք բառերի հիմքում՝ խեթ. hašsu-«արք», ավեստ. ahū-«տեր», ahura-«տիրակալ, տեր, իշխող», հին հնդկ. nsura-«աստվածություն, ոգի», հին հայ. ass «աստված», և առկա է հին իրանական Ahura-Mazdā (քառացիորեն՝ «Տեր իմաստուն», Արամազդ) դիցանվան մեջ: Հայերենում այս հնդեվրոպական արմատը օրինաչափորեն վերածվել էր \*աս-ի առկա Աստուած (\*աս-տիւած) և այլ բառերում:<sup>58</sup> Քանի որ Asalduhi-ն դիցանուն է, ապա նրա անվան աս- բաղադրիչների (դրանք ևս «տեր, տիրակալ» են նշանակում):<sup>59</sup>

As-alд-ս-hi դիցանվան երկրորդ բաղադրիչը, ըստ երևույթին, արտացոլում է հ.-ե. \*eld-/\*ld- «քաց» արմատը, որի ժառանգն է առկա հայ. եղտիր//աղտիր բառում<sup>60</sup>

<sup>51</sup> Պանալամյան Ա., նշվ. աշխ., էջ 129:

<sup>52</sup> Լայայան Ե., Երկեր, հ. I, Եր., 1983, էջ 392: Պանալամյան Ա., նշվ. աշխ., էջ 129-130, 407-409:

<sup>53</sup> ՀԱԲ, հ. III, էջ 159, հ. IV, էջ 341, ՀԲԲ, հ. II, Եր., 1944, էջ 74, հ. III, Եր., 1944, էջ 177:

<sup>54</sup> Աֆանասյեան Վ.Կ., Մարդկ, ՄՀՄ, տ. II, ստր. 110. Նոյմին Ասալդուկ, ՄՀՄ, Ենկո, ստր. 662.

<sup>55</sup> Նոյմին, Ասալդուկ, ստր. 64, Նոյմին, Մարդկ, ստր. 110, Նոյմին, Ենկո, ստր. 662.

<sup>56</sup> Նոյմին, Ասալդուկ, ստր. 64.

<sup>57</sup> Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Կարմիրբուրյան D'AMAR.UTU և Կուեռ-Կուառ աստվածությունների առնության մասին, «Շիրակի պատմամշակության ժառանգություն», միջազգային ուժերորդ գլուխական նատարժանի մայութեր, Եր., 2010, էջ 67-69:

<sup>58</sup> Զահեմլյան Գ., Հայկական շերտը ուրարտական դիցանում, «Պատմա-բանափրական հանդես», 1986, թիվ 1, էջ 52: Պետրոսյան Ս., Հայոց մեհենսգրության ակունքներում, էջ 12-14:

<sup>59</sup> Դյեկոնով Ի.Մ., Գործա-գույնարժության մեջ պատմություններում, 1989, ստր. 64: Աֆանասյեան Վ. Կ., Գուլգամեշ և Էնկուդ, ստր. 112, որ. 3.

<sup>60</sup> ՀՀ ՊՆԺ, էջ 121:

(նշանակում է «մարդ ջրարքի և խաղ գետոյ»)<sup>61</sup> և Հրազդան գետի սեպազիր Ildarunia (<\*eld-arun-ia>) անվան մեջ (սրա-արս- բաղադրիչը հննտ. առող բառի և սրանից ծագած Առուն գետանվան հետ,<sup>62</sup> իսկ -ia բաղադրիչը՝ ի վերջածանցի հետ, որոնք ևս հնդեվրոպական ծագում ունեն): Նույն արմատի ա-ով տարբերակն է առկա սեպազրային Մազալուն <\*Maq-alt-um> տեղանվան մեջ<sup>63</sup> (Շերլզայիս Կարսից հյուսիս), խեթերեն altannisi-/aldanni- «ակունք, աղբյուր», «ջրհոր» բառում<sup>64</sup> և այնպիսի գետանուններում, ինչպիսիք են հայկական Աղբարա-ն (Մեղրու շրջանում), Աղդա-ն (Վայոց Զորում), Աղդան-ը (Բագանի շրջանում), Աղտաղտ-ը (Կարփին շրջանում),<sup>65</sup> փոքրասիական Alda-ն, մակեդոնական 'Ալտօս-ը, իլյուրական Alto-ն, Դանուրի ավազանի Altina-ն և այլն:<sup>66</sup>

Հնդեվրոպական ծագում ունի նաև As-ald-սի դիցանվան երրորդ՝ սի, բաղադրիչը: Հայտնի է, որ սեպազրային ս-ն կարող էր արտացոլել նաև օ հնչյունը: Ըստ այսմ, դիցանվան այս բաղադրիչը մենք նույնական ենք համարում հայերեն ոյս բառի նույնածագում, նույնահունչ, բայց այլինաստ տարբերակի հետ: Ոյս «քեն, վրեժխնդրություն» բառը ծագում է հ.-ե. \*օկ<sup>ս</sup> «տեսնել», «աչք» նախաձեկց,<sup>67</sup> որի տարբերակից է նաև ակմ «աչք» (հոգն. ակունք) բառը: Վերջինս գործածվում է նաև «աղբյուրի բխած տեղը, ջրի աչք» նշանակություններով (հմմտ. պարս. չաշմե, արար. ‘այն, երբ. ‘այն, ասուր. Շոս, վրաց. Քվալի «աչք, ակունք, աղբյուր»):<sup>68</sup> Նույն երևույթի ականատեսն ենք նաև ոյս տարբերակի դեպքում. տեղի է ունեցել «աչք», «ակունք»>«գետ» իմաստարանական տեղաշարժը. հմմտ. ճորդին (<\* ճոր-դին) գետանունը, ջուր խմելիս, լողանակիս հաճույք արտահայտող օխա-~/ոխա-~/ բացականչությունը և Օխայ (<\*Ոխ-այ) հերիարային ջրաբնակ ոգու անունը: Վերջիններին \*ոյս/\*ոյս բաղադրիչների «ջրային» բնույթի վկան է նաև դրանց \*ախս տարբերակի առկայությունը Ախտրեան գետանունում (>սեպազր. Ահուրան տեղանունը) և Անձախ, Ծանախ գետանուն-ձորանուններում:<sup>69</sup> Asalduնի դիցանվան սի բաղադրիչը ևս, ըստ երևույթին, «ակունք» է նշանակել, իսկ դիցանունն ամրողությամբ ունեցել է «տեղը ջրերի ակունքի» իմաստը:

Էնկի-Հայա աստծուն առնչվող ջրային բնույթի առասպեկտարանական կերպարներից էին արգալա (արադ. ապկալլ) կոչված ոգինները: Էնկիի այս ենթականները

<sup>61</sup> ՆՀԲ, հ. I, Եր., 1979, էջ 45, 657: Հմմտ. «Աղտաղտուկ-շոռ տեղի» և «Եղտիկր-տեղի գիջի, կամ ծծիմք ջրոյ, կամ փոքր աղրիւր» («Բառազիրք հայոց», Քննական բնագիրը, առաջարանը և ծանոթագրությունները Հ. Անալյանի, Եր., 1975, էջ 13, 88):

<sup>62</sup> Երեմյան Ս., Աշվ. աշխ., էջ 38, 46:

<sup>63</sup> Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., Պատմական իրականության արտացոլումը հմագոյն Վանանդի մի քանի տեղանուններում, Գյումրիի Ս.Նալբանդյանի անվան մամկավարժական իմաստինությ հանրապետական գիտական նախաշրջան. զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1999, էջ 14-15:

<sup>64</sup> ԱՅԱ, տ. II, ստր. 862, 945.

<sup>65</sup> Հակոբյան Թ., Սելիք-Բախչյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Եր., 1986, էջ 72, 77, 168, 169, 198:

<sup>66</sup> ԱՅԱ, տ. II, ստր. 862, 945.

<sup>67</sup> Ջեայկան Գ., Օчерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, сстр. 122, 271.

<sup>68</sup> ՀԱԲ, հ. I, էջ 106-108:

<sup>69</sup> Պետրոսյան Ս., Պետրոսյան Ծ., Պետրոսյան Լ., «Ջրերի զավակի» պաշտամունքի արտացոլումը սեպազրային մի քանի տեղանուններում, ՀՀ ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գյուտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 77-79: Ըստ երևույթին ջրաբնակ ոգուն նոյն արմատի ախս տարբերակով է են կանչել: Վերը նշված հերիարքում նաև «Ժուրնիկ իրեղեն» էակ է, անունը Լուսեղեն: Հերիարքային հերոսը, երբ սարի աղբյուրի մոտ «կը կզի ջուր խմե, կէն «ա խ»: - Զա՞ն, - կըսէ աներևուրք ձեն մեն»: Տղայի հարցին, թե ով էր դա ասողը, ջրաբնակը պատասխանում է: «Չը լսե՞՞ր իս, ընձի Լուսեղեն կըսին, ես Ջրերու բազալորի աղջիկն իս, իրս իմ մասուն ու պակուն կը բնակոին մըջ յաղբրական» (էջ 17-20):

բնակվում էին Արգուս, մշակութակիր էակներ էին և հայտնի շինարարներ:<sup>70</sup> Abgala դիցանունը կարելի է տրամել ab- և -gala բարադրիչների, դրանցից երկրորդի հիմքում տեսնելով հ.-ե. \*geL- «կոլ տալ, լափել» արմատի ստորին \*gl- ձայնարձը: Սիօին ձայնարձից ունենք հայերեն կոլ «կոլ տալու զրծողությունը» արմատը և կուղը «ջրշուն» բառը:<sup>71</sup> Ըստ երևույթին, դիցանվան մեջ այն կիրառված է «շուն» նշանակությամբ: Հ.-ե. \*gl-hg սերած պետք է համարել հայերենի օրինաշափությամբ \*կալ տեսքն ստացած արմատը՝ առկա կալոշ (<\*կալ-ոշ. վերջածանցը հմնտ. դողոշ, բորոշ, դանդալոշ, լմկոշ և այլն) բառում: Կալոշ նշանակում է «մեծ շուն, գամփո»:<sup>72</sup> Նույն այս արմատն առկա է նաև կաղկանձել «շան ձագի վճկվնկալը, աղերսական ձայնով հաչելը», «(շների) կնձկնձալ, լալ, վճկվնկալ» բառում (կաղ-կանձ-ել հմնտ. կնձ-ա-ձայն)<sup>73</sup> որտեղ ևս կաղ-կաղ-բաղադրիչը «շուն, շան ձագ» է նշանակել: Ըստ այս, Abgala դիցանունը բառացիորեն «ջրշուն» է նշանակում, բայց վերաբերում է կուղին և ջրսամույրին. հմնտ. հայ. շուն և ջրշուն «կուղը», պարս. sag «շուն» և sagābi «կուղը, ջրսամույր» (բառացի՝ «ջրային շուն»),<sup>74</sup> իին իոլ. և «շուն, գայլ» և dobor-chú «կուղը» (բառացի՝ «ջրի շուն»):<sup>75</sup>

Ենի-հայա աստծուն ներակա արգալաների կուղը և ջրսամույր նախատիպեր ունենալու առքիվ հիշենք, որ նրանք ջրբնակ ոգիներ էին, բայց նաև շինարարներ (ինչպես կուղերը), իսկ նրանցից Աղապան հայտնի ձկնորս էր (ինչպես ջրսամույրը) և մշտակես ձուկ էր մատակարարում ոչ միայն իր հոր՝ Ենիի էրեղու քաղաքի տաճարին, այլև ամբողջ քաղաքին:<sup>76</sup> Արգալաների անվան հնդեվրոպական ստուգաբնությունը խոսում է նրանց նախատիպերի ձևավորման մասին փարքամ անտառներով և ձկնառատ վճար ջրերով մի այնպիսի երկրում, ինչպիսին էր հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքը՝ Հայկական լեռնաշխարհը:<sup>77</sup> Այստեղ կուղը պաշտամունքի առարկա է եղել նախ և առաջ իր աճուկի մեջ պարունակող հոտավետ նյութի պատճառով: Կուղի ձու կամ կողրաձու կոշվածը «կուղի ծննդական զրծարանների խուլերում գոյացող հեղուկ նյութ է, որ գործ է դրվում բժշկության մեջ այլ և այլ հիվանդությունների դեմ (Castoreum)»:<sup>78</sup> Մեր նախնիներին այդ իրողությունը հայտնի է եղել հազարամյակներ առաջ: Վան քաղաքից արևելք հայտնաբերված Մենուա քագավորի (մ.թ.ա. 810-786թ.) արձանագրությունից պարզվում է, որ նա այստեղ բուժարան է կառուցել:<sup>79</sup> Իսկ զյուղի Կողրանց//\*Կուղրանց՝ «կուղրերի» անունը արդեն խոսում է ինքն իր մասին: «Կուղր» նշանակող հիմքով կազմված է մի շարք տեղանուններ կան Հայկական լեռնաշխարհում: Այդ տեղանուններից են. Կողր/Կողրաքար, Կողրայ գետ, Կողրովոր (արևելյան Գուգարքում), Կողր (Ծակք Մասյացոտնում), Կողրենիք (Արարկիրի շրջան, Փոքր Հայքում)<sup>80</sup> և այլն:

<sup>70</sup> Աֆանասյեա Բ.Կ., Աօզу, MC, ստր. 8.

<sup>71</sup> ՀԱԲ, հ. II, էջ 655: Կուղը բառն համարվում է փոխառյալ «աստրի մի այնպիսի զավառական ձեից», որ ուներ ու ձայնավորը» (Առլենք, էջ 657), բայց կոլ արմատի հետ նրա ունեցած ծագում-նարանական կապը բացառում է այդ հնարավորությունը:

<sup>72</sup> ՀԲԲ, հ. II, էջ 365:

<sup>73</sup> ՀԱԲ, հ. II, էջ 496, ՀԲԲ, հ. II, էջ 371:

<sup>74</sup> “Պերսիծո-ռուսկու սլավար”, տ. II, M., 1970, ստր. 51.

<sup>75</sup> ԻЯИ, տ. II, ստր. 530, որ. 1, ստր. 590.

<sup>76</sup> Աֆանասյեա Բ., Ածառ, MC, ստր. 20.

<sup>77</sup> Սարդարյան Ս., Աշվ.աշխ., էջ 104: Շենգավիրի պեղումներից հայտնաբերված զետային կուղրի ծմուռը «փաստական ապացույցն է այն բանի, որ հնում՝ Նեղյիրում և Էնեղյիրում, Հայաստանի տերիսորիայում բնակվել են կուղեր» (Առյան տեղում, էջ 103):

<sup>78</sup> ՀԲԲ, հ. II, էջ 446:

<sup>79</sup> «Հայ ժողովրդի պատմության քրեստուատիա», հ. I, Եր., 1981, էջ 51:

<sup>80</sup> Երեմյան Ս., Աշվ.աշխ., էջ 48, 59, 60, 104, 110:

Այս տեղանուններից Կողը-ը և Կողի շրջանի Ծակատք անունը հմարավոր են դարձնում ստուգարաններու նաև այդ շրջանի (կամ այդ շրջանը ներառած երկի) ուրարտական դարաշրջանի անունը՝ Gulutahi-ն: Մրա հիմքը տեղական Guluta- ձևն է, որին կցորդվել է ուրարտական սեպագրության լեվի -ի վերջածանը: \*Guluta-ն բաղկացած է ցևս- և -ta բաղադրիչներից: Մրանցից առաջինը հ.-ն. \*gel- «կուլ տայ, լափե» արմատի միջին ձայնարձից ծագած հնագույն հայերենի վերոհիշյալ արմատն է: Ինչպես նշվեց, դրա հետին ձևն է առկա գրաբարի կու «կուլ տալու գործողությունը» և կուղը «ջրշուն» բառերում: \*Guluta-ի -ta/-rho բաղադրիչը ևս հնդեվրոպական ծագում ունի: Հ.-ն. \*tā- «հալվել, լուծվել» արմատն են պարունակում ազգակից լեզուների հետևյալ բառերը. հայ. քաց, քանալ «քրծել», քանչ, քոն<քաւն «տեղատարակ անձրև», հուն. տակ «հալվել», հին հնդկ. տցամ «ջուր», անզ-սաքս. Թռա «քաց, խոնավ, ջրալի» և այլն:<sup>81</sup> Արմատի իմաստներն առհասարակ վերաբերում են ջրային տարեքին, որով էլ \*Guluta-ն բացահայտում է իր «ջրշուն» նշանակությունը: Ի դեպ, Գուլությանի մաս կազմած և Կողը (\*կողը/կուղը) անվամբ բնակավայրն ընդգրկած շրջանը կրում էր Ծակատք (<\*Ճակ-ատ-ք) անունը: Խոկ սրա հիմք Ճակ բառը ևս «քացություն» և սրան մոտ հմաստներ է պարունակում (հնմտ. Ճակ-ի ճախ տարբերակը՝ «ճահիճ, ջրոտ՝ քաց տեղ»):<sup>82</sup> Ծակատք տեղանունը բացահայտում է այն կրած շրջանի հարմարավետությունը կուղերի բնակության և բազմացման տեսանկյունից: \*Guluta- «կուղը, ջրշուն» բառը հետունազրային ժամանակաշրջանում ունենալու էր \*կուղը/\*կողը ձևը, որից էլ, մեր կարծիքով, ծագում է վաղ միջնադարի Կողը զավառանունը: Այսպես էր կոչվում Շամքրի շրջանը Հյուսիսային Արցախում (Գարդման):<sup>83</sup>

Խոսքի առարկա \*ցևս «ջուն» բառն է, մեր կարծիքով, պարունակում նաև ուրարտական դարաշրջանի Իշգիս երկրանունը: Այս երկիրն ընդգրկում էր ներկայիս Շիրակի մարզի հյուսիսը՝ համապատասխանելով հին Աշոցք գավառին:<sup>84</sup> Իշգիս// \*Իշգիս երկրանունը բաղկացած է \*Isq և \*ցևս բաղադրիչներից: Երկրորդ բաղադրիչի նշանակությունը պարզ է՝ այն «ջուն» նշանակող վերոհիշյալ բառն է: Երկրանվան առաջին՝ isqi- բաղադրիչի հիմքում էլ, մեր կարծիքով, հայերեն սիկ բառի \*սիկ նախածն է (հնմտ. տեղ<ետղ>, այսինքն, սիկ<-սիկ>սեպազը. իսզի: Սիկ նշանակում է «ջրի հատակին նստած տիղն», «մասնավորապես՝ կենդանական և բուսական մարմինների քայրայված մնացորդներ, որոնք հողի հետ միասին նստում են ջրի հատակին»),<sup>85</sup> որից՝ սիկի «ջրի տակ սուզվել՝ մրուրի պես», սիկել «ջրի տակ սուզվել, ընկղոնվել»:<sup>86</sup> Իրանական ինչ-որ անհայտ բարբարից մեր սիկ-ը փոխառյալ համարելը քիչ հավանական է, մանավանդ որ իրանական հայտնի բառերը «ավագ» են նշանակում (հնարավոր է հայերեն բառի՝ իրանական բառերի ազդեցությամբ ձևափոխում՝ բաղարկում): Սեր կողմից առաջարկվող ստուգարանությամբ՝ Isqigis նշանակում է «սկոռ ջուն», այսինքն՝ կամ «կուղը, ջրշուն», կամ «ջրսամույր»: Այս առիկվ նշենք, որ Isqigis / Աշոցքի տառածքում է գտնվում Արփա (Արփի) լիճը՝ իր ճահճային շրջակայքով և ձկնառատ ջրեռով: Աշոցքում կուղերի երթեմնի գոյությունը հաստատվում է նաև Բալիրա տեղանվան միջոցով: Մրա զոյությունը պայմանավորված է լիճելու կուղի պաշտամունքով: Այս

<sup>81</sup> ՀԱԲ, հ. II, էջ 150, 217:

<sup>82</sup> ՀԱԲ, հ. III, էջ 174, 175, 177:

<sup>83</sup> Երեմյան Ս., ճշգ. աշխ., էջ 60: Հմմտ. Արցախի բարբառի կուլ «գայլ» բառը՝ ծագած նոյն \*gul-նախածնից: «Ծուն»//«ընտանի գայլ», խոկ «գայլ»//«վայրի ջուն» նոյնացումը հանրահայտ է:

<sup>84</sup> Նոյն տեղում, էջ 36:

<sup>85</sup> ՀՔԲ, հ. IV, Եր. 1945, էջ 213:

<sup>86</sup> ՀՔԲ, հ. IV, Եր. 1945, էջ 228, ՀԱԲ, հ. IV, էջ 212 (հնմտ. նաև սկոռիլ «ծանր-ծանր ջրի տակ իջ-աել» բարբառային բառը – ՀԱԲ, հ. IV, էջ 213):

տեսանկյունից հասովկ ուշադրության է արժանի ավեստյան Արդվիսուրա-Անահիտա դիցուհու տոտեմական նախատիսկերից մեկի կուղը լինելու հանգանաճքը: Սա իր արտացոլումն է գտել «Ավեստա»-ի յաշտերից մեկի հետևյալ տողերում:<sup>87</sup>

Կուղի նորթիներ է հազել  
Արդվիսուրա Անահիտան՝  
Երեք հարյուր էզ կուղթերի,  
Չորս անգամ ծնածների:<sup>88</sup>

«Ավեստա»-ի լեզվում կուղը կոչվում է *bawra/bawrō*, իսկ այդ բառի հիմքում հ.-ե. \*bhero- «գորշ, բուխ» արմատն է, որից է նաև հայերեն *բորենի* (բորեան, բորե) բառը (հմնտ. բարբառային *բորանի* «բորենու մորթուց շինված մուշտակ»):<sup>89</sup> Բավրա անունով գյուղ ունենք ոչ միայն նախկին Աշոցքում, այլև ունեցել ենք լճառատ Զավախիք տարածքում:<sup>90</sup> Ամենայն հավանականությամբ ավեստյան իրանցիները կուղի պաշտամունքը յուրացրել էին դեռևս հնդեվրոպական նախահայրենիքում (Հայկական լեռնաշխարհը՝ հարակից շրջաններով), երբ բնակվում էին հայկական ցեղերի հետ կողը կողը, իսկ իրենց նոր հայրենիքում հաստատվելուց հետո այն պահպանել էին որպես Արդվիսուրա-Անահիտա դիցուհու պաշտամունքի բաղադրիչ: Ըստ այսմ, բացառված չէ, որ հնդեվրոպական-հայկական էրնոսի ինչ-որ հատված նույն կերպ կուղի պաշտամունքը Հայկական լեռնաշխարհից տարել և հասցրել էր հարավային Միջազգետք՝ Շումեր:

Վերոշարադրյալը, բխելով հայկական և միջազետքյան առասպելաբանական նյութի տիպաբանական և լեզվաբանական վերլուծություններից, մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ շումերաքաղաքան առասպելաբանության առանձին կերպարների և դրանց հարակից նյութի խորքային շերտերի բացահայտումն ու իմաստավորումն անհնար է մինչև Վերջ իրազրութել՝ առանց հաշվի առնելու հասկացությունների այն զուգորդումներն ու համարդումները, որոնք ծնվել են Հայկական լեռնաշխարհում, ներ հեռավոր նախնիների երևակայության մեջ և արտացոլվել հայի առասպելաբանական պատկերացումներում ու լեզվում:

## ОБ АРМЯНО-ШУМЕРСКИХ МИФОЛОГИЧЕСКИХ ОТНОШЕНИЯХ

Резюме

С.Петросян

Шумерский бог пресных вод Энки//Айа часто изображается с символами Тигра и Евфрата. Козел постоянный символ, а также прототип этого козлолового бога. Дело в том, что по представлениям древних индоевройцев самцы рогатых животных являются "изливателями": и.-е. \*ṛsen- "изливать" > "мужской" > арм. *աղճ* "самец дикого барана", др. перс. *aran* "самец, мужчина", греч. *αρνειός* "самец барана" и т. пр. Потомоним *Dignat/Diglat* "река Тигр" происходит от и.-е. \*dig- "козел" (>арм. *աղկ* "козел">"бурдюк").

<sup>87</sup> *Бергельс Е.*, Извбранные труды. История персидско-таджикской литературы, М., 1960, стр. 62.

<sup>88</sup> «Կուղը»-ի փոխարեն հանդիպում է նաև «օրսամոյր» բարգմանուրյունը (տե՛ս *Fernand Comte, Larousse des Mythologies du Monde, Éditions france Loisirs, Larousse 2005*, p. 137):

<sup>89</sup> ՀԱԲ, հ. I, էջ 477:

<sup>90</sup> Թ. Հակոբյան, Ստ. Մելիք - Բախչյան, Հ. Քարսեղյան, Աշվ. աշխ., հ. I, էջ 614:

В противоборстве Энки-Абзу свое мифологическое отражение нашло действительное противоборство между рогатыми и змеями. Имя Abzu состоит из компонентов \*ab-(<и.-е. \*abh- "вода") и -zu (<и.-е. \*g'hu арм. ձմլկն "рыба"). Другое название Абзу - Enguita также и.-е. происхождения: \*Eng-ur-<и.-е. \*eng-(>арм. \*ing-il->\*ընդր-ш) "морское чудовище", латин. anguilla "угорь" и т. пр.).

Теоним Asalduhi, который носил сын Энки (впоследствии идентифицируется с вавилонским Мардуком), также и.-е. происхождения: As-ald -uhī ср. и.-е. \*ans- "господин, господь" + и.-е. \*eld-/ \*ld- "мокрый, влажный" + и.-е. \*okʷ- "глаз, око" (здесь "исток, источник"). Имя водяных мифологических существ аблалов состоит из компонентов \*ab-<и.-е. \*abh- "вода" и \*gal-<и.-е. \*gel-/\*gol-/\*gl- "поглотить, пожирать". И.-е. \*gl->арм. կալու "крупная сильная собака", а \*gol->կուղ-ք "бобр". Таким образом, abgala означает "водяная собака", т.е. "бобр" или "выдра": ср. арм. ջրշոն "бобр", перс. sagābī "бобр, выдра", др. ирл.\*dobor-chú "бобр" (все дословно "собака воды, водяная собака").